

Անոնք ալ կը սկըսին Տէրութեան և Բյուջններու հետ ընել մեծ գործառնութիւններ՝ հազորդակցութեանց, գիւտերու, շոգենաւներու տակաւ յոռաջագիմնող դիւրութեանց արագութեան չափով՝ արագ արաւ կրկնապատկելով իրենց ազգեցութիւնը դիտութիւնն և հարբստութիւնը արեւմտեան գաղափարներու և ոճերու նախնական աղօտ շփումը կը սկըսի իրենց որդիներուն ձեռքով, և արեւելեանէ ու արեւմտեանէ խառնուրդ միջին կենցաղ մը, արուեստագիտութիւն մը, կառավարելու և կառավարուելու տարալ մը յատուկ՝ մարմին կ'առնէ հետզհետէ, որուն բաւական ալ կ'ընդգրկմանն հիներէն մնացած ամիրաներն և որուն մեծապէս կը նպաստեն Վննետիկի կիրթ վերապատուելիներն ու Պալիսի հոռմէական հայերուն երեւելիները: Ասոնցմէ բաւական զատ՝ Չատահանց — Տատահանց Տունը՝ կը ճանչցուի իբրև Ասոբայեա Տէրութեան ու Պալեանցն իբրև ճարտարապետ արքունի, առաջինն հարիւր քառասունի մօտ, իսկ* երկրորդն երկու հարիւր աւելի տարուան ընտանիք մը, որուն յայն ժամու ներկայացուցիչն էր Գրիգոր ամիրայ Պալեան, բարի ու պաշտ մարդը: 1790էն մինչև 1830 փայլող և փայլեցունող մեծ ամիրաներէն մին եղած է այս Պապա Գրիգոր ամիրան Պալեան, որ իր նահապետական պարզ մարդասիրութեամբն և ուսումնասէր ննարագիտութեամբը սիրելի եղած էր թէ՛ Օսմանեան վեհապետին աւազանիին թէ՛ հայ պատրիարքներուն մեծերուն և ժողովուրդին: Իր ճարտարապետական ձեռնկալուն եղած է իր հայրը Մակար խալֆան, ինչպէս ինք ալ շատերուն, մանաւանդ Ղազէզ Արթինին ձեռքէն բռնած է և ներկայացուցած է զայն Օսմանեան վեհապետին՝ ի-

* Պալեանց մախաճան է Գարամամի Պելէմ գիւղէմ Պալի խալֆա՝ 1682ին Պոլիս եկած, որ ապա բարբրդէմ սերունդ ունեցած է Գրիգոր խալֆամ, ինք մեռած է 1725ին, իր որդին է Միմաս խալֆայ՝ մեռեալ 1730ին, անոր որդին Մակար խալֆա՝ գործունեայ և համեմարելի ճարտարապետն որ՝ ի սէջ այլոց շինած է Նուրի օսմանիիէ մզկիթը. ասոր որդին է պապա Գրիգոր խալֆամ: